ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի ապրիլի 29-30-ը Վրաստանի Թբիլիսի քաղաքում կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

Արևհատ Պողոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության ճանապարհային քաղաքականության բաժնի պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Վրաստան, մայրաքաղաք Թբիլիսի, 2024թ. ապրիլի 29-30-ը

4. **Հրավիրող կողմը.**

«Արևելյան դաշինք հանուն անվտանգ և կայուն տրանսպորտի» (EASST) միջազգային կազմակերպություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Միջոցառման նպատակն էր տարածաշրջանային երկխոսության և քննարկման նպատակով համախմբելու ճանապարհային անվտանգության պաշտոնյաներին և ՀԿ ղեկավարներին Արևելյան Եվրոպայից, Հարավային Կովկասից և Կենտրոնական Ասիայից՝ կենտրոնանալու ազգային և տարածաշրջանային առաջնահերթությունների վրա, ինչպես նաև ուսումնասիրելու համագործակցության հնարավորությունները և ընդհանուր կարիքները 2025թ. փետրվարին Մարաքեշում կայանալիք նախարարական համաժողովին ընդառաջ: Մասնավորապես, կենտրոնանալ ճանապարհային անվտանգության քաղաքականության բարելավման, իրականացման և կիրառման ուղիների վրա՝ նվազեցնելու երթևեկության արագությունը և ապահովելու երեխաների անվտանգությունը դպրոցական գոտիներում:

6. **Քննարկված թեմաները.**

Միջոցառման ընթացքում ներկայացվել և քննարկվել են հետևյալ թեմաները.

- ✓ Ճանապարհային անվտանգության կարգավիճակը տարածաշրջանում և անվտանգ համակարգի մոտեցումը.

- ✓ Ճանապարհային անվտանգությունը որպես բազմաոլորտ խնդիր և կապը ԿԶՆ-ների հետ.
- ✓ Ճանապարհային անվտանգության 4-րդ գլոբալ նախարարական համաժողովի ընդհանուր շրջանակը.
- ✓ Դպրոցական գոտիներում 30կմ/ժ արագության սահմանման առաջընթացը: Ինչու է կարևոր դպրոցների շրջակայքում ճանապարհային անվտանգությունը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Արևելյան գործընկերության (ԱլԳ) Ճանապարհային անվտանգության դիտակետի ստեղծման նպատակով ոչ պաշտոնական նախնական աշխատանքային հանդիպում է տեղի ունեցել Հայաստանի Հանրապետության, Վրաստանի, Մոլդովայի, Ուկրաինայի և Ադրբեջանի ներկայացուցիչների միջև, որի ընթացքում քննարկվել է դիտակետի ստեղծման նպատակը և ընդհանուր շրջանակը, ինչպես նաև ճանապարհային անվտանգության բարելավման գործում հետագա գործողությունները: Դիտակետի աշխատանքները համակարգվելու է Վրաստանի կողմից:

Հանդիպումների ընթացքում ներկայացրել եմ Հայաստանի ճանապարհային անվտանգության ազգային ռազմավարության փաստաթղթի բովանդակությունը ճանապարհային անվտագության գլոբալ թիրախներին հասնելու համար իրականացվող միջոցառումները, ինչպես նաև Հայաստանում (մասնավորապես՝ Երևանում, Գյումրիում, և Վանաձորում) դպրոցական գոտիներում 30կմ/ժ արագության սահմանման հետ կապված մեր կողմից իրականացված ուսումնասիրությունները և հետագա քայլերը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Միջոցառման ընթացքում քննարվել է Արևելյան գործընկերության (ԱլԳ) Ճանապարհային անվտանգության դիտակետի ստեղծման նպատակով իրականացվելիք աշխատանքները և առաջիկայում կազմակերպվելիք առցանց հանդիպումների շրջանակը, ինչպես նաև պայմանավորվածություն է ձեռք բերվել Արևելյան գործընկերության (ԱլԳ) երկրների միջև «Արևելյան գործընկերության (ԱլԳ) Ճանապարհային անվտանգության տարածաշրջանային դիտակետի ստեղծմանը աջակցելու համար» փոխըմբռնման հուշագրի ստորագրման նախնական ժամկետների մասին (հուշագրի նախագիծը ՀՀ կառավարության 26.01.2023 թվականի N 110-Ն որոշման հավելվածով հաստատված իրավաբանական պարտադիր ուժ չունեցող միջազգային բնույթի փաստաթղթերի կնքման ընթացակարգերին համապատասխան համաձայնեցվել է ՀՀ վարչապետի աշխատակազմի հետ):

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի շրջանակներում տեղի ունեցած հանդիպումների և քննարկումների արդյունքում ճանապարհային անվտանգության ոլորտի միջազգային կազմակերպությունների և ԱլԳ երկրների փորձը օգտակար կլինի Հայաստանում ճանապարհային անվտանգության, մասնավորապես ճանապարհային ենթակառուցվածքների անվտանգության բարեփոխումների իրականացման համար: Համագործակցությունը կշարունակվի ԱլԳ Ճանապարհային անվտանգության դիտակետի շրջանակներում: Ուստի առաջարկում եմ Հայաստանի Հանրապետությունում ճանապարհային անվտանգության բարելավման նպատակով դիտակետի աշխատանքներին ներգրավել նաև ճանապարհային ոլորտի բոլոր շահագրգիռ պետական մարմիններին և կազմակերպություններին (ՆԳՆ, Առողջապահության նախարարություն, «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ, ոլորտի հասարարական կազմակերպություններ և այլն):

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

06.05.2024թ.